ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2008թ. սեպտեմբերի 25-ի թիվ 5 նիստում

ԳԽ Նախագահ, տնօրեն Մ.Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

«25» սեպտեմբերի 2008թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. 1. Սույն կանոնակարգով սահմանվում է *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ֆակուլտետ»* մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման կարգը:

1. 2. *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ֆակուլտետ»* մրցանակաբաշխությունը կազմակերպվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում 2 անգամ կիսամյակի արդյունքներով, որի նպատակն է ամփոփել և խրախուսել մասնաճյուղի ֆակուլտետներում տարվող ուսումնամեթոդական և գիտական գործունեությունը:

1. 3. Սույն կանոնակարգը հաստատվում, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարվում են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ներկայացմամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ:

2. «ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

2. 1. *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ֆակուլտետ»* մրցանակաբաշխությունը կազմակերպում և անցկացնում է *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ֆակուլտետ»* մրցանակաբաշխության հանձնաժողովը (այսուհետ՝ *հանձնաժողով*):

2. 2. *Հանձնաժողովը* բաղկացած է 8 անդամից, որի կազմի մեջ մտնում են մասնաճյուղի ուսումնամեթոդական բաժնի ավագ դիսպետչերը, մասնաճյուղի արհմիության նախագահը, ֆակուլտետների դեկանները, ուսանողական խորհրդի նախագահը, ուսանողական գիտական ընկերության նախագահը:

Հանձնաժողովի անդամներն իրենց գործունեությունը իրականացնում են հասարակական հիմունքներով:

2. 3. *Հանձնաժողովը* նախագահում է ուսումնամեթոդական բաժնի ավագ դիսպետչերը:

2. 4. *Հանձնաժողովը* հաստատում է իր գործունեության աշխատակարգը:

2. 5. *Հանձնաժողովի* նիստը իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների կեսից ավելին:

Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:

3. «ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ» ՄՐՑԱՆԱԿԱԿՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

3. 1. «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ֆակուլտետ» մրցանակակրի ընտրության գործընթացում *Հանձնաժողովը* առաջնորդվում է հետևյալ հիմնական չափորոշիչներով.

ա/ Բոլոնիայի գործընթացի պահանջների կատարման շրջանակներում ֆակուլտետի խորհրդի և դեկանատի կողմից ֆակուլտետում ծրագրային բարձր չափորոշիչների պահպանման, ուսման որակի և ուսուցման արդյունավետության բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքներ

բ/ ֆակուլտետի ուսանողների ուսման առաջադիմություն, որն արտահայտվում է կիսամյակի ուսման առաջադիմության տոկոսներով

գ/ ֆակուլտետի աբիտուրների կողմից տարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքներ

դ/ ֆակուլտետի ուսանողների օրինակելի վարք, հասարակական ակտիվություն գիտական աշխատանքներ կատարելու ունակությունը

3. 2. Ֆակուլտետի ամբիոնների դասախոսների և ուսանողների կողմից գիտական աշխատանքների կատարման մակարդակը գնահատվում է 5-7 միավորներով

- 5 միավորի կարող է հավակնել այն ֆակուլտետը, որի ամբիոնների դասախոսները և ուսանողները մասնակցել են ներմասնաճյուղային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն պատվոգրեր, գովասանագրեր, դիպլոմներ
- 6 միավորի կարող է հավակնել այն ֆակուլտետը, որի ամբիոնների դասախոսները և ուսանողները մասնակցել են հանրապետական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն հրատարակված աշխատանքներ հանրապետական գիտական ամսագրերում

- 7 միավորի կարող է հավակնել այն ֆակուլտետը, որի ամբիոնների դասախոսները և ուսանողները մասնակցել են միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն հրատարակված աշխատանքներ միջազգային գիտական ամսագրերում

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4. 1. Հանձնաժողովի կողմից ընդունած որոշումները կարող են բողոքարկվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենին, «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ֆակուլտետ» մրցանակաբաշխության անցկացման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում:

4. 2. Հանձնաժողովի կողմից որոշումների ընդունման կամ «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ֆակուլտետ» մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման գործընթացում ՀՀ օրենսդրության, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կանոնադրության և սույն կանոնակարգի խախտումներ ի հայտ գալու դեպքում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենը գրավոր, պատճառաբանված որոշմամբ անվավեր է ճանաչում «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ֆակուլտետ» մրցանակակրի ընտրությունը և 5- օրյա ժամկետում նշանակում նոր ընտրություն: